

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԴԻՐ

Վ. Ա. Հակոբյան

ՄԻ ԶԵՌԱԳԻՐ ՌՈՒՍ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մաշտոցի անվան Երևանի պետական մատենադարանի ձեռագրերից մեկը, որը հավանաբար գրված է 18-րդ դարի վերջերին կամ 19-րդ դարի սկզբներին, վաղուց էր գրավել մեր ուշադրությունը: Այն օսմանյան թուրքերի պատմությունն է: Այդ պատմությունը սկսվում է 13-րդ դարի վերջից և հասնում 1646 թ., Բերահիմ 1-ի ժամանակաշրջանի մի մասը: Ձեռագրում զգալի տեղ է տրված թուրքերի կողմից նվաճված կամ նվաճման փորձ կատարված ժողովուրդների՝ հունգարների, լեհերի, ռուսների, ուկրաինացիների, մոլդավների, վրացիների մասին ևղած տեղեկություններին: Այդ տեղեկությունները վերաբերում են նշված ժողովուրդների պատմական անցյալի առանձին հարցերին, տերիտորիային, բնական և կլիմայական պայմաններին, ազգագրական նյութերին և այլն:

Հոգվածի սահմաններում հնարավոր չէ կանգ առնել բոլոր նյութերի վրա, ուստի կվերցնենք ռուսների և ուկրաինացիների մասին եղած վկայությունները:

Համառոտակի նշելով 1576 թ. լեհերի և ռուսների միջև տեղի ունեցած պատերազմի մասին, հեղինակն ընդհատում է շարադրման ընթացքը և հաղորդում տեղեկություններ Ռուսաստանի և ռուսների մասին, հիշեցնելով «մի համարիցի անելորդ կամ ընդ ունայն կան արտաքոյ քան զառաջադրեալ նիւթն սակաւ ինչ զբօսնման աղաղաւ շրջագայիլ, տալով համառօտ պտոյտ մի սրաթոիչ մտօք զաշխարհաւն Մօսկովագ...»¹: Ապա սկսում է շարադրանքը ռուսների ծագումից. «Ուռուսեան կամ Լոսսօլանք սերեալք ի շթացն ասիացոց տակաւին ի բարուց և ի վարուցն յայտնապէս երևի»²:

Այնուհետև թվում է ռուսների տիրապետությունը, թե դեպի ուր է տարածվում. «Ժառանգէ և տիրապետէ զմեծ մասն Սարմաթիայու, յայնկոյս դետոյն յորջորջեցելոյ Թանայի... նաև սպիտակ Ուռուսքն են ենթ[ակայ] նորին թագաւորութեանն... սահմանեալ կայ առ կողմն հիւսիսոյ և վիճակակցի ընդ Սառնային ծովուն. և ի կողմանէ արևելեան ունի զհոչակաւոր գետսն Օպիլ և Վօլկայ. և ի կողմանէ արևմտեան կցի Լիթուանիայու, Լեհաստանու և Ըշվէցիայու»³:

Իտալական մղոնի հաշվումներով նշելով Ռուսաստանի երկարությունը և լայնությունը, հեղինակը ավելացնում է. «Բաժանի ի բազում մասնաւոր դրքսութիւնս և իշխանութիւնս»⁴:

¹ Ձեռագիր № 496, էջ 212ա:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 212ա:

⁴ Նույն տեղում, էջ 212բ:

Այնուհետև թվում է Ռուսաստանի մեջ մտնող նահանգները. «Ի Թաթարստան Ասիական, Օրտյքն Զաւայօնաց, Գաժանաց կամ Ղազախաց, Նակայնաց, Սօհիպանսկաց և Աժտէրխանաց մինչև ցԿասրից ծովն՝ ընդ Սիպերացոցն, Սամթիէտաց, Թինկօէսաց»⁵։ Գլխավոր լեռները՝ «որք և ուռուս լեզուաւ կոչին ըռիֆէյք (իմա релѣѣ) կամ իրերպօրէի (հուն. Ὀρεῖς-βόρειοι — հյուսիսային — Վ. Հ.) ի կողմն գետոյն Բեթցօրաց, որ և կոչի Բթօլր կամ սինք աշխարհի»⁶։ Թերևս հեղինակը նկատի ունի Ուրալյան լեռները։

Գետերից թվում է Ոգաթ, Տօնտ, Թանայի, Լօվաթ, Վսլկայ, Թունայ, Իլիվօնիայ, Վաժա, Մօսգվի, Նէկլինայ, Նարվայ, Օպիլ։ Վերջինիս մասին ասում է, որ «ղարմանաբեր է» և երբևէ հեղեղում է իր ափերը նման Նեղոսին։ Նավահանգիստներից նշում է միայն Աստրախանը, ուր «ղրոհաբար մատչին վաճառականք՝ հայք, պարսիկք, սուրբ նիկողայոսացիք և հրեշտակապետցիք՝ և անկլեզացիք, ֆիլամենկացիք, տանգմարգացիք, սոքա և այլ բազումք յաճախեն»⁸։ Բուսականության մասին գրում է. «տայ առատապէս զամենայն ցեղ հունտս և գեր քան զամենեսեան գցորեան, այլև զգանազան բանջարս զընտիրս և զպարարտս, զգէրս և զփափուկս, համեղս ի կերակուր, զորս ուտողքն լաւ սնանին մարմնով»⁹։ Հիշելով «սաղարթախիտ լայնատարած» անտառները՝ նշում է, որ այստեղ չի աճում խաղողի որթ, այդ պատճառով գինի չի լինում և մարգիկ «կորեկջուրս ըմպեն»։

Հեղինակը հիշում է նաև սպիտակ դիշերների մասին. «Ի կողմանէ փօրեագին» (հուն. φορμα — հյուսիսի, հյուսիսային կողմի) քաղաքում, հավանաբար Պետերբուրգում, խիստ ցուրտ է, մայիս, հունիս և հուլիս ամիսներին գիշեր չի լինում, իսկ նոյեմբեր, դեկտեմբեր և հունվար ամիսներին ցերեկ չի լինում։ Վրիմայի ցրտության պատճառով մորթ ունեցող կենդանիները հարգի են և շուկաներում դրանց մորթիները բավական թանկ են գնահատվում։ Կենդանիների յուրաքանչյուր տեսակը «անուանեն իւրեանց բարբառովն» (իմա ուսերեն)՝ շիւրի, տօսսի և թօփի անապատային, մարթօրի, լօնթրէ, կօլօնի սեւօք և սպիտակք, ... արմէլլինի, և սպիտակ աղուէսք... և խունտուզք և լեռնային կատուք, զոր ցեպիլլինի ասեն, և սեւա աղուհսունք»։ Ռուսաստանի դետերը և լճերը հարուստ են տեսակ-տեսակ ձկներով, թեև չի նշում այդ տեսակները և լճերի անունները։

Աշխատության հաջորդ հատվածներում նկարագրում է ոռոսներին «մօսկովքն են միջնահասակք, բուրբ և ուժեղք, երկայնամօրուս և տանօղք աշխատանաց... խորամանկք են և յանդուգք»¹⁰։ Ռուսների մշտական թշնամիները թուրքերն են (նաև թաթարները), լեհերը և շվեդները։

Ծխախոտի տեսակները Ռուսաստանում շատ են և օգտագործում են միշտ։ Հեղինակը տալիս է նաև տեղեկություններ ոռոսների հաղուստի մասին. «Ձղեստ նոցին է երկայն, իսկ պճնազարդ և զգարդս ականջ սիրեն և ի կիր արկանեն»¹¹։

⁵ Նույն տեղում, էջ 212ր։

⁶ Նույն տեղում, էջ 212ր։

⁷ Այս երկու դեպքում ժողովուրդներին փոխանակ անվանելու երկրի անունով կամ աղղությամբ, կոչում է եկեղեցիների անունով։ Սրանց տեղագրությունը չկարողացանք որոշել։

⁸ Նույն տեղում, էջ 212ր։

⁹ Նույն տեղում, էջ 213ր։

¹⁰ Նույն տեղում, էջ 213ա։

¹¹ Նույն տեղում, էջ 213ա։

լեզվի մասին գրում է. «Այլ է լեզուն որ խօսին և այլ զոր ընթերցուն։ Ոչ ունին զփիլիսոփայա և զաստուածաբանս, որպէս այժմ յոյնք և հայք, ոչ ունին զհոգադեայս, այս է զմատենաս, այլ փարթամք են վաճառիք»¹²։

Հետաքրքիր տեղեկութիւններ կան, հեղինակի դիտողութիւններով հանդերձ, ռուսական զորքի և զենքի մասին. «Ի բանակս իւրեանց ունին զդինուորս ավելի քան զհարիւր հազար ձիաւորս։ Բազում պոյարք կամ ազնուականք, հարիւրապետք և այլք, ոչ բնաւ պատերազմին մինչև ոչ գիտասցեն զինքեանս զոլ ավելի թուով և զօրութեամբ, քան զթշնամին։ Ի գործ ածեն զնետս և զթիֆէնկս և զայլ զէնս։ Ի ջատագովելն են երբեմն գովելիք և շարշարանաց ընդիմացողք են, քան զամենայն ազգս։ Հրամայէ միայն ինքնակալ արքայ մի»¹³։

Նշվում է, որ երկար ժամանակ ռուսները հարկատու են եղել թուրքերին (իմա մոնղոլներին) և ազատվել են միայն Իվան 3-րդ ավագ դքսի կողմից։

Այնուհետև, հեղինակը հաղորդում է Վոլգա և Դոն գետերը միացնելու թուրքերի տարած աշխատանքների մասին, հենց այդտեղ էլ նշում, որ դա արվում էր ռազմական նպատակներով¹⁴։ Կան մի քանի համառոտ վկայութիւններ ռուսների և լեհերի, ռուսների և թուրքերի միջև տեղի ունեցած պատերազմների մասին։ Ինչո՞ւ է բացատրում հեղինակը թուրքերի պատերազմական հաջողութիւնները. ռուսները «եթէ միաբան և միախորհուրդ ընթանայցէին ընդ լեհացւոցն, ընդ որս ստէպ պատերազմին, կարիցէին առնել զճար սոյն գունակ գիշատեալ լինելոյն երկրին իւրեանց»¹⁵։ Հեղինակը նշում է, որ Ստեֆան Բատորիի դեմ պատերազմելիս ռուսները կորցրին Վոլոսոսք, Սոգոս, Սուսայ, Թորոլիայ, Նիսչերտայ և զայս տեղիս»¹⁶։ Իսկ դրանից «եղև օգուտ թուրքացն, որ միշտ սպասէ ցնծացեալ զսոյն գունակ պարագայս, այսինքն զբրիստոնէից մաքառումն, զի զմիմեանս կոտորեալ պակասեցին և մի կարիցեն ամբառնալ զձեռս ընդդէմ գերշացն իւրեանց»¹⁷։

Սրանք են այն տվյալները ռուսների մասին, որ հանդիպում ենք այս աշխատության մեջ։

Այժմ Ուկրաինայի և ուկրաինացիների մասին։

Ուկրաինան տարածվում է թի Բօլոնիայու և ի պետութենէ Պրանտապուրկին մինչև ցվիրչին եզերս Ուոուսաց, պարունակելով զընդարձակ գաւառն կամ զվիճակն Ղազախից, այս է զՈւբրինայ, որ է հավասար մեծ թագաւորութեան միոյ, որ և յայսմ ժամանակի էր ենթադրեալ լէհացն»¹⁸։ Ռուս ասելով հեղինակը նկատի ունի ռուսներին, ուկրաինացիներին և բելոռուսներին։ Հեղինակը այստեղ արտահայտել է այն ճշմարտութիւնը, որ այդ երեք ժողովուրդները սերվել են միևնույն արմատից։ Այդ պատճառով էլ այս երեք ժողովուրդների տերիտորիան նա համարում է «գաւառն Ուոուսաց», որը «բաժանի յերիս, այս է, սպիտակ, սեաւ և կարմիր։ Սպիտակն է կցեալ լիթուանիայու, կարմիրն՝ Բօլոնիայու, սեաւն, որ է յայնկոյս Բանայիայու, պատկանի Մօսկովից հո-

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում, էջ 213աբ։

16 Նույն տեղում, էջ 213բ։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 284ա։

դոյն: Այսօրիկ երկիրքս ամենեքեան են բարգաւաճք ամենայն բարեօք երկրայնովք և ծովայնովք և անշափ է մեղրն»¹⁹: Իսկ «Բօսորիայաւ պարոնութիւնն այնքան բարի և կենսատու յօղապարիւ պճնեցուցեալ է ի հեղինակէ բնութեանն»²⁰:

Նշելով Ուկրաինայի վարչական կառուցվածքը՝ 7 ընդարձակ վոյեվոդություններ և 22 ժերակույտ, խոսում է նրա մայրաքաղաք Լվովի ջուկանների մասին: «Մայրաքաղաքն իւր է Լէօպօլիսն, հռչակաւոր է և համբաւուն վասն փարթամ բազարին, որ կանգնի ի հրապարակն սրբուհւոյն Ակնէսի, միւս ևս գերանուն, որ կանգնի ի Վերափոխման հրապարակն, ուրանօր գան վաճառականքն Պարսից. ի Կոստանդնուպոլսոյ, ի Վենետիկոյ, ի Մօսկովու և ի Ֆիլամենկաց. նաև բերեն զբաղում կենդանիս՝ զեզինս, զոչխարս, և զարջարս, զերիվարս կամ զգրաստս և այլ սոյն գունակս, որք լինին ընդամենն աւելի քան զվաթսուն հազարն»²¹:

1637 թ. Ազով բերդը թուրքերից գրավելու կապակցությամբ հեղինակը տալիս է տեղեկություններ կազակների պատմական անցյալի վերաբերյալ: Նախ՝ ստուգաբանում է կազակ անունը: Այն «արտաւանէ ի ծայնէս դոզայի, որ ի մերս բարբառ հնչէ գաբրայ, այս է այծ»²²: Այնուհետև տալիս է հնարավոր երկու բացատրություն, թե ինչու են կազակ կոչվել. առաջին՝ «ունէին զսովորութիւն զգենուլ զմորթիս այծեայս», երկրորդ՝ «պարս ըմբռնէին ցայթքէին նման այծու»²³: Ապա, առանց անունը տալու, հիշում է կազակների առաջին քաղաքը. «Առաջին քաղաքն նոցա եղև փոքրիկ իմն մերձ ափոյն Պօրիստէն գետոյն, ...ուրանօր էր արքսորեալ Օվիտոսս»²⁴. Ուստի ունի սա գեօղ մի, որ կոչի Օվիտօնայ»²⁵: Սակայն, ուրիշների կարծիքով, ինչպես գրում է հեղինակը, «ժողովուրդքս այսօրիկ (կազակները—Վ. Հ.) ունիցին զիրեանց զսկիզբն յանցաւորաց, որք վասն զերծանելոյ ի պատժոյն իւրեանց եղեռնագործութեանցն արժանապէս կրելոցք էին, ուստի փախստականք մեկուսացան յայնքան հեռագոյն տեղի, որ կարէ ասիլ ծայրն երկրի...»²⁶:

Այստեղ կազակները զբաղվում էին որսորդությամբ և ձկնորսությամբ: Այդ փոքրիկ վայրից կազակները հետագայում տարածվեցին. «գաւառն նոցին տարածի ի հարիւր քսան հանգրուան, սկսեալ ի Բալաթինիանու ծագէն ընդ Քեօվիայի մինչև ցարձակն Պօրիսթլէնէու, որ տարածի առաւել քան զվեց հարիւր Իդալիայու մղոն և լայնութիւնն ևս (40), որ իւրեանց մղոնաւն լինէր ԲՃ (200): Ի մէջ այն եզերաց կամ սահմանաց կարէր մեկնիլ մեծ թագաւորութիւն մի»²⁷: Ապա հեղինակն անդրադառնում է կազակների զորավարի ով լինելուն և նրա ապրելակերպին. «Առաջին զօրավարն նոցին էր Պուղտան

19 Նույն տեղում, էջ 284ր:

20 Նույն տեղում, էջ 284ր:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, էջ 302ա:

23 Նույն տեղում, էջ 302ա:

24 Հոռմի Օգոստոս կայսրը կասկածելով իր կնոջ և Օվիտոսի մտերիմ հարաբերությունների վրա 9 թ. (մ. թ. հ.) աշնանը վերջինիս արքսորում է Սև ծովի ափերը: Դնեպր գետի լիմանում գտնվում է Օվիդոպոլ չրջանային կենտրոնը, պատմական նիկոնիում քաղաքը, որը և ընդունվում է Օվիտոսի արքսորավայրը:

25 Նույն տեղում, էջ 302ա:

26 Նույն տեղում, էջ 302ա:

27 Նույն տեղում, էջ 302ր:

Տիմիսի, այդ համբաւուն՝ վասն բնտիր արիութեանն, հայր նորին էր մին յազնուականացն իթուանիայու, որ արսորեալ և յազնուականութենէ զրկեալ էր, վասն յանցանաց շարաց, որ գնացեալ ապաստանեցաւ ի Յարօրօզայ, այդ բարձրահասակ, հաստառակ, բայց նրբամիտ և ռիսորտախօս, յարմար կենցաղավարութեան, ոչ սիրէր զարդարանս, այլ ունէր յոյժ մակացութիւնս, ուր ննջէր՝ զնետն և զաղկուն և զայլ զինս անդէն կախէր»²⁸:

Եթե բացառենք կազակների առանձին արշավանքների մասին ևղած տեղեկությունները Թուրքիայի տիրապետությունների տարբեր մասերում (1628, 1629, 1633 թթ. և այլն), ապա մանրամասն տեղեկություններ գտնում ենք 1621 թ. խոթինի պատերազմի վերաբերյալ: 1618 թ. ներքո հեղինակը խոսելով Կ. Պոլիս եկած լեհական զինուորի և Օսման II-ի բանակցությունների մասին, նշում է, որ Օսման II-ը բանակցություններից հետո «եղ ի մտի զատելութիւն յնդ աշնմ թագաւորութեան (լեհերին—Վ. Հ.), որով խորհեր բնաջինջ առնել զնա, բայց ասէր. «Մինչև ոչ սանձահարեացի լէ՛ն, ոչ կործանի զաղախն, զի սա նովաւ կեայ»²⁹:

Սրանից հետո նկարագրում է թուրքական բանակի պատերազմին նախապատրաստվելու աշխատանքները: Թուրքական զորքի քանակի մասին գրում է. «բոլոր բանակն՝ արուեստաորօք և մրգավաճառիք հանդերձ համարեցաւ լինիլ թուով աւելի քան զչորս հարիւր հազարս, բայց ի թաթարացն, որք էին ԿԹ (60000)»³⁰:

1621 թ. սկսելով արշավանքը Օսման II-ը իր մեծ բանակով հասնում է Ադրիանապոլ: Այստեղ հեղինակը հաղորդում է մի մանրապատում: Երբ Օսման II-ը անցնում էր Ադրիանապոլի կամրջով նրան մոտենում են 4 զերվիշ և ողորմություն խնդրում, ձիերը խրտնում են և վայր է ընկնում Օսման II-ի զլիսանոցը: Այս բանը թուրքերի կողմից դիտվում է որպէս շար նշան:

Ապա հեղինակը նկարագրում է լեհական բանակի նախապատրաստությունը: Լեհերը օգնության համար դիմեցին Հռոմի պապին և Իսպանիայի թագավորին՝ զբաց ի քահանայապետէն և ի կայսերէն միայն ժողովեցին յանոյշ խօսս, բայց ամենայն խոստմունքն էին ունայնք առանց գործոյ»³¹:

Այստեղ թերևս հնարավոր չէ կանգ առնել թշնամի բանակների փոփոխական հաջողությունների, ռազմաճակատի առանձին հատվածներում տեղի ունեցած կռիվների, բանակներում հանդես եկած համաճարակի, սովի և խռովությունների նկարագրության վրա: Հեղինակը մի քանի անգամ նշում է կազակների ցույց տված անձնազոհ մարտերը թուրքական զորավար Կանտեմիրի բանակի դեմ՝ «որոց զբազումս սպանին զազախքն և զԳանտէմիրն զերի վարեցին»³², կամ Հուսեին փաշայի բանակի կործանումը, որին «և զսիրելի ոմն թագաւորին բեւեռեցին ի վերայ ծառոցն զազախքն»³³: Մի այլ հատվածում «հարան թուրքքն և ստոր անկան և եէնիշերիքն ի փախովստի ստիպեցան ի զազախացն»³⁴ և կամ «ի նոյն զիշերի ԸԹ (8000) զազախք մտեալք ի զաշտս

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում, էջ 282բ—283ա:

30 Նույն տեղում, էջ 285բ:

31 Նույն տեղում, էջ 286ա:

32 Նույն տեղում, էջ 286բ:

33 Նույն տեղում, էջ 286բ—287ա:

34 Նույն տեղում, էջ 287բ:

մարտին և սպանմամբ փախուցին ղթուրքս, առին զուղտս և որ ինչ նոցայն էր»³⁵։

Հեղինակը, դժբախտաբար, ճակատամարտերի ընթացքը չի նշում ամսաթվերով, այլ նշում է առաջին օրը կամ հաջորդ օրը և այլն։ Աշխատության մեջ հետաքրքրություն շարժող թվեր կան լեհական և կազակական զորքերի մասին։ Լեհական զորքի մասին ասում է, որ զլխավոր հրամանատարը «ունէր անելի քան զուսուն հազար մարտիկս լաւ կարգադրեալ»³⁶։ Իսկ կազակները՝ մասին ասում է. «յարեաւ դասն ազնուականաց և ելին յերկար 2 (80) և ԺԲՌ (12000) զազախք»³⁷։

Հայկական ուրիշ աղբյուրներ, որոնց անդրադարձել ենք մեր մի այլ հոդվածում³⁸, բոլորովին այլ թիվ են նշում՝ 45000։ Նույնիսկ լեհական աղբյուրները կազակների թիվը նշում են 30000³⁹։ Թե որտեղից է վերցրել մեր հեղինակն այս թիվը, չկարողացանք պարզել։ Ի վերջո թուրքերը պարտվում են և խնդրում հաշտություն։ Աշխատության մեջ բերվում են հաշտության պայմանագրի կետերը.

1. Լեհերը պարտավորվեցին՝ արգելել կազակների հարձակումները Թուրքիայի տերիտորիաների վրա։

2. Թուրքերը պարտավորվեցին՝ չհարձակվել քրիստոնյաների, մասնավորապես լեհերի տիրապետությունների վրա։

3. Գոգինի (sic) բերդը թողնվում է Մոլդավիայի իշխանին։

4. Երկկողմանի գերիների փոխանակում։

5. Առևտրի ազատ զարգացում⁴⁰։

Սակայն հեղինակը դժգոհում է հաշտության պայմանագրից։ Քանի որ պատերազմում պարտվել էին թուրքերը, հետևապես ոչ թե հաշտություն էր պետք, այլ թուրքերի լիակատար ջախջախում։ Նա կշտամբում է քրիստոնյաներին (լեհերին), որ «ոչ է բարւոք ի կէս ճանապարհին, այս է ի մէջ արշաւանացն կանգնիլն զի է գործել ընդդէմ կանոնի յաղթութեանն, որ պահանջէ՝ զյառաջ մատչումն մինչև ի սպառ։ Միշտ քրիստոնեայք ոչ զիտացին վաւելել զպտուղն յաղթութեանցն պատերազմին, որպէս թուրքքն վայելեն, զի եթէ նոքա անբեալք իցէին զբանակն լէհաց, հետևապէս ձեռնամուխ լինէին և յառաջ մատչէին մինչև տիրել զբոլոր թագաւորութիւնն, իսկ մերսյինքն բաւականան միայն ջատագովութեամբ իւրեանցն և արիութիւն մերայնոցն կայանայ ի գէմ տալն կրել զհարուածս...»⁴¹։

Հնարավոր չէ կազակների ձեռնարկած բոլոր արշավանքների մասին խոսել. դրանցից կառանձնացնենք առավել ուշագրավները, որոնց մեջ հեղինակը տալիս է նաև այլ տեղեկություններ։ 1622—1624 թվականների մասին խոսելիս նա գրում է. «Կարգեցին ի վերա զազախաց զմեծաւորս լէհս, որպէսզի արգելուցուն զնա առնելոյ զյարձակմունս առ ի տալոյ զվնաս յիճակին Թուրքաս»։

35 Նույն տեղում, էջ 287ր։

36 Նույն տեղում, էջ 286ր։

37 Նույն տեղում, էջ 286ա։

38 «Армянские источники об Украине и украинцах» (տե՛ս, «Исторические связи и дружба украинского и армянского народов» ժողովածուում, Երևան, 1961, էջ 220)։

39 «Мемуары относящиеся к истории Южной Руси», Киев, 1896, стр. 52.

40 Նույն տեղում, էջ 288ար։

41 Նույն տեղում, էջ 288ր։

տանի. բայց նոքա զոլովք փափագողք և սովորք դիշատել զԹուրքաստան, կոտորեցին զնոսա (լեհերին—Վ. Հ.) և զարհուրելի և կատաղի յարձակմունս արարին և կողոպտեցին և առին զբազում աւարս, որք (կազակները—Վ. Հ.) էին ԵՃ (500) շայխայք. ուր դիմէին իբրև հեղեղատ արմատաքի ապականէին»⁴², Այս վկայության շարունակության մեջ հեղինակը նկարագրում է կազակներին նավերը և նրանց դյուրաշարժ լինելը. «ղազախքն շինեցին զոմանս թեթև նաւս, արագս՝ յերկոսին կողմանս ունէին տասն-տասն թիս կամ թևս, յորոց զմէկն շարժէր երկու մարդ, որք առ յետս և առաջ կոյս զնացուցանէին, որոց յառաջ կոյսն նման էր յետին կողմն: Ուրեմն ունէին զէկս յառաջ կոյս և յետ կոյս, ուստի դիրաւ դառնային աստ և անդ և դիրաւ և փութով մերձենային ցամաքին յորմէ կողմանէ և իցէ: Վասն վաղվաղակի ելանելոյ ի ցամաքն. արդ յանկարծակի կոխէին և սարսափեցուցանէին և առնէին զբազում շարիս, որք էին արք աներկիւղածք յաստուծոյ: Չմեռանիլն իւրեանց կեանք համարէին: Վառեալք էին պէսպէս և ամենայն զինուր»⁴³:

Աշխատության մեջ հեղինակը բավական մանրամասն է խոսում կազակների և ապա թուրքերի կողմից Ազով (պատմական Տանա կամ Տանախ) բերդի ետ գրավման մասին: 1637 թ. թուրք-պարսկական կռիվների և Թուրքիայում տեղի ունեցած խռովությունների մասին խոսելուց հետո հեղինակը հաղորդում է, որ այդ ժամանակ լուր հասավ, թե կազակները և ռուսները պաշարել են Ազովը (հեղինակը կոչում է էօսէկ⁴⁴): Ապա նկարագրում է Ազովի տեղադրությունը. «զէօսէկ որ և Թանայ կոչի, դի այնմ տեղուք է, ուր Թանայի զետն ի ծովն մտանէ, որ է կառուցեալ ի վերա բլրակի միոջ ի վերուստ ի վայր, քառանկիւնի, որոյ շրջապատն է Ռեմ (1500) քայլս: Նախքան զառնելն զնա թուրքքն, էր հասարակ իսկելէ ամենայն ցեղ վաճառականաց, մանաւանդ վիսնտիկցիք սովորք էին լաւ, շահաւոր վաճառս առնել անտանօր և զնել առաւել ի ծովու քան ի ցամաքի. յայսմ կողմանէ զնային նաւքն նոցին ի Պարսիկս և զգերիս բերէին ի վաճառել Թուրքս, Մօսկովս և Թաթարս:

Որոյ պարիսպքն էին ի հին ժամանակէ և հաստատունք: Եւ յանկիւնս ունէր զմեծամեծ ամուր աշտարակս և սաստիկ ամրոց մի: Եւս յափն ջրոց շրջապատեալ, որ զքաղաքն յերկուս բաժանէր, իբր հաւասար մասունս: Թուրքքն ոչ ունէին անտանօր պահապանս, այլ երեք-չորս հարիւր զինուորս, զի էր հեռագոյն ի հզոր թշնամեաց, ուստի ոչ էր նմա պիտոյ պահպանութիւն...»⁴⁵:

Այնուհետև նշում է էօսէկ քաղաքի համար 1637 թ. մղվող կռիվները: Կազակները «ոչ ունէին բնաւ զէնս և ոչ զմեթերիզ առնել կարէին. թուրքքն յառաջին զիմին արհամարհեցին զնոսա, իբր ոչ համարէին, սակայն, ապա տեսին, որ պատրաստեցին զփայտատս և զթիւֆէնկս և սկսան ըմբռնանալ. ձգել զահարկու թիւֆէնկս և համարձակիլ մտանել ի վիհն և փայտատօքն բրիլ զպարիսպս քաղաքին: Եւ զի յոյժ երկկան ի նոցանէ և ոմանք փախեալն, մնացեալքն մտին ի յաշտարակն և զքաղաքն ետուն»⁴⁶:

42 Նույն տեղում, էջ 291ր:

43 Նույն տեղում, էջ 291բ—292ա:

44 Պոլովցիները Ազովը կոչել են Ազակ, հեղինակի գործածած էօսէկը, արդյունք Ազակի հունարեն կամ մի այլ լեզվով արտաբերելու ձևը չէ:

45 Նույն տեղում, էջ 301ր:

46 Նույն տեղում, էջ 302ր:

Գրավելուց հետո կազակներն ըմբռնելով էօսէկի տեղադրության նշանակությունը «շինեցին անտանօր զթերսխանայ մի իրեանց նաւուցն»⁴⁷։ Թուրքերը նկատելով, որ կազակներն ամրանում են և սեփականացնում էօսէկը, մտածում են, թե ինչպես զրավեն այն⁴⁸։

Այնուհետև մանրամասն նկարագրում է 1641 թ. թուրքերի արշավանքը էօսէկ, ուր գտնվում էր օգնության որևէ հույս չունեցող 12000 կադակ։ Ընդհակառակը, Հեհաստանի և Մոսկվայի թագավորները, ինչպես գրում է հեղինակը, շտապել էին հաղորդել սուլթանին, թե իրենք ոչ մի օգնություն ցույց չեն տա կազակներին⁴⁹։

Հեղինակը նրանց այս վարմունքը դատապարտում է. «Ոչ խորհեցան, թէ եթէ թողուն քամել զարիւն երակացն զազախից, յետոյ կարգն գայր ինքեանց»⁵⁰։ Եվ թեև կազակները միայնակ մնացին թուրքերի և թաթարների հրակայական բանակների դեմ. «Սակայն ոչ սրտարեկեցան, այլ ամենայն արիւնքով քննեցին զօրանալոյն և յառաջ մատչելոյն թուրքաց, բնաւ ոչ պղտորեալ պնդասրտեցան և քաջ բազկաւ հարեալ ի բաց կորզեցին, ուստի ծաղր արարեալ խայտառակեցին զթուրքս, այնքան անթիւ զօրօքն և յարատե ձգմամբ թփփցն...»⁵¹։ Թուրքերը առժամանակ չեն գրոհում, զգում են մթերքի և վառոդի պակաս։ Սակայն, շուտով ձեռնարկում են նոր և կատաղի հարձակում։ Բայց թուրքերը բախվեցին «ի կարծր վէմն անկասկած համարձակութեան նոցին, այս է զազախացն, հուսկ յետոյ խորտակեալք փշրեցան և փրփրեցան բարկութեամբ և ամօթալից յետս շողան»⁵² (խոսքը թուրքերի մասին է—Վ. Հ.)։ Այս անհաջողությունից հետո կապուտան փաշային պաշտոնազրկում են։ Հաջորդ տարին թուրքերը մեծ օգնություն ստանալով, դիմեցին նոր հարձակման. «Բայց, սակայն, զազախքն բնաւ ոչ սրտարեկեցան, այլ արիացան ևս և ջանային զօրեղութեամբ յաղթողք լինիլ ըստ առաջնոյն, թէև թուով և բազմութեամբ խիստ սակաւք էին, քան զթուրքս, ուրեմն լցին զպակասութիւն ամրոցացն, զորս կործանեցին անհաւատքն, կրծովք իրեանց հսկայահամբաւ զինուորքն, այս է զկուրծս իրեանց փոխան ամրոցի արարեալ դէմ ետուն զազախքն թփփից և թիֆէնկիցն բոնութեան թուրքացն, և յօժարեցան անկասկած մարմնովք իրեանց լնուլ զմեթերիզաց վիհսն և փակել կամ կափուցանել զբառ տեղիս պարսպաց քաղաքին...»⁵³։ Թուրքերն այս անգամ ևս նահանջում են։ Կազակները զղալով, որ թուրքերը նորից են հարձակվելու էօսէկի վրա, նախապատրաստվում են նոր պատերազմի։ Միաժամանակ կազակները մի դեսպանությամբ Մոսկվայի թագավորից խնդրում են օգնություն⁵⁴։ Միխայիլ Ֆեոդորովիչը հայտնում է սուլթան Իբրահիմ 1-ին, որ ինքը կազակներին չի օգնելու։ Ի վերջո 1643 թ. Մոլդավիայի իշխանի կաշառատությունից և ապա զավաճանության միջոցով կազակներից թուրքերը զրավում են էօսէկը։ Սրանից

⁴⁷ Նույն տեղում։

⁴⁸ Նույն տեղում, էջ 317ր։

⁴⁹ Նույն տեղում։

⁵⁰ Նույն տեղում, էջ 317ր։

⁵¹ Նույն տեղում, էջ 317ր։ (Ազովի համար թուրքերի մղած կռիվների մասին է պատմում նաև խաչատուր Կաֆայեցին իր ժամանակագրության մեջ), տե՛ս «Մանր ժամանակագրություններ» 13—18-րդ դդ., հտ. 1, Արևան, 1952, էջ 222—223։

⁵² Նույն տեղում, էջ 318ա։

⁵³ Նույն տեղում, էջ 319ր։

⁵⁴ Նույն տեղում, էջ 320ր։

հետո «զաղախսս ելիալս յէօսէկէ անտի... մեկուսացան և զետեղեցան ի կղզի մի Քունայի (՝), որ էր ի վերայ միոյ լեզուի ելիոյ ի զետափոյն ուրանօր յայլում ժամանակի բազում յառաջ բնակեալք էին, զոր և անուանեալ կոչէին Գուրքէս-քէրման, ...ուստի անդ շինեցին զնորակերտ քաղաք մի ի բնակութիւն և յօթեանս իւրեանց...»⁵⁵:

Սրանք են այն տեղեկությունները, որոնք գտնում ենք նշված աշխատության տարրեր մասերում ուսնների, ուկրաինացիների և նրանց հայրենիքի մասին:

Ռուսների, ուկրաինացիների ու նրանց հետ կապված քաղաքական դեպքերի մասին հաղորդած այս և այլ տեղեկությունները, որոնք գտնում ենք հայ մատենագրության մեջ, թերևս էական նշանակություն չունենան տվյալ ժողովուրդների պատմության հիմնական գրվադները շարադրելիս: Սակայն կարևորը դա չէ, այլ այն, որ հայ մատենագրության մեջ եղած տեղեկությունների շնորհիվ միջնադարյան հայ ընթերցողները զաղափար էին կազմում այդ ժողովուրդների մասին, լայնացնում իրենց մտահորիզոնը և բարեկամաբար տրամադրվում նրանց նկատմամբ, մի բարեկամություն, որը դալիս է դարերի խորքից և նոր բովանդակություն ու լիցք ստանում մեր օրերում:

В. А. Акопян

РУКОПИСЬ О РУССКОМ И УКРАИНСКОМ НАРОДАХ

Р е з ю м е

В Ереванском государственном хранилище древних рукописей им. Маштоца—Матенадаране хранится рукопись № 496. Это рукопись конца XVIII или начала XIX века. Она содержит историю оттоманских турок с XIII до середины XVII веков, точнее до 1646 г. Значительное место отведено в рукописи сведениям о народах стран, которые завоевали или пытались завоевать турки: о венграх, поляках, русских, украинцах, молдаванах, грузинах.

В данной статье приводятся сведения, касающиеся русского и украинского народов.

Анализируя рукопись, мы видим, что в ней в первую очередь указываются границы России и ее губерний, далее описываются ее реки и горы, говорится о климате, лесах России и пушнине, как ценности, получаемой из России. Интересны с точки зрения этнографии описания русской одежды, военного снаряжения того времени—стрел, винтовок. Указывается, что русские в обороне мужественны, переносят всякие трудности.

Касаясь Украины, автор рукописи дает ее границы, восторженно отзывается о столице Западной Украины городе Львове как о большом

торговом центре. Довольно подробно излагается история Хотинской битвы 1621 г. Отмечаются доблесть, героизм и военная смекалка украинцев. Так же подробно повествуется о сражениях украинцев с турками в 1638—1643 гг. за Азовскую крепость. В этой связи описывается местонахождение Азова. В конце автор повествует об обстоятельствах сдачи крепости туркам.